

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Ա. ՆԻՍՏ

(3 ապրիլ 1995)

1995 թվականի ապրիլի 3-ին ամենայն հայոց հավատքի կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում մատուցվեց Սուրբ և անմահ Պատարագ: Պատարագեց ու քարոզեց ԱՄՆ-ի արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արք. Պարսամյանը: Պատարագի ընթացքում տեղի ունեցավ աշխարհական պատգամավորների երդման արարողություն՝ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Թորգոմ արքեպիսկոպոսի երդմնեցուցչությամբ: Երդման արարողությունից հետո բոլոր պատգամավորները Ս. Հաղորդություն ստացան: Հավարտ Սուրբ Պատարագի երջանկահիշատակ Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի շիրմի մոտ տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն:

Ժամը 11-ին Վեհարանում սկսվեց Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորների գրանցումը: Գրանցվեցին 398 պատգամավորներ:

Ժամը 14.30-ին Վեհարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ Ժողովի բացումը: Ժողովը աղոթքով բացեց Կ. Պոլսո Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին արք. Գազանճյանը, ապա տեղեկացրեց, որ, մինչև ժողովի դիվանի ընտրությունը, դիվանի աշխատանքները ժամանակավորապես կատարելու են Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետն ու ատենադպիրը:

Հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի բարի գալուստ մաղթելով պատգամավորներին, Սրբազան Պատրիարքը խոսքը տվեց Ժողովի գրասենյակի տնօրեն Տ. Վաչե արք. Հովսեփյանին: Սրբազան Հայրը Ժողովին տեղեկություն տվեց գրասենյակի կատարած աշխատանքների մասին և, հանուն ժողովականների, շնորհակալություն հայտնեց Ժողովի հրավիրման աշխատանքներին մասնակցած բոլոր անձանց:

Ստուգիչ հանձնախմբի ատենապետ Տ. Մեսրոպ արք. Գրիգորյանը հանձնախմբի անունից ներկայացրեց արձանագրության արդյունքները, որի համաձայն ընտրված 421 պատգամավորներից ներկա են 398-ը: Ապա Տ. Վաչե արքեպիսկոպոսը կատարեց պատգամավորների ստուգումը:

Ստուգումից հետո ժողովասրահ մուտք գործեցին Կաթողիկոսական Տեղապահ Տ. Թորգոմ արք. Մանուկյանը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Հայրապետը, ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Բաբկեն Արարքցյանը, ՀՀ փոխ-

նախագահ Գագիկ Հարությունյանը, ՀՀ վարչապետ Հրանտ Բագրատյանը, ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ Կարեն Բաբուրյանը, ՀՀ Ներքին գործոց նախարար Վանո Սիրադեղյանը, ՀՀ Կառավարությանն առընթեր կրոնից գործերի խորհրդի նախագահի պաշտոնակատար Լազար Սուջյանը, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի գործադիր տնօրեն Մանուշակ Պետրոսյանը:

Կաթողիկոսական Տեղապահ Տ. Թորգոմ արքեպիսկոպոսն իր ողջույնի խոսքից հետո ձայն տվեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին: Դիվանի քարտուղարությանը հանձնվեցին ԼՂՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ Կարեն Բաբուրյանի և ԼՂՀ վարչապետ Լեոնարդ Պետրոսյանի շնորհավորագրերը, որոնք կցված են սույն արձանագրությանը:

Այնուհետև ձայնը տրվեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ-ին:

Ժողովի կանոնակարգի քննարկման համար խոսքը տրվեց Տ. Խաժակ արք. Պարսամյանին: Սրբազանը կետ առ կետ ընթերցեց կանոնակարգի նախագիծը, որի շուրջ տեղի ունեցավ մտքերի փոխանակում: Վերջին հոդվածի շուրջ, որի համաձայն «Ազգային-Եկեղեցական Ժողովը. նորընտիր Կաթողիկոսին առաջարկում է նշանակել Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին՝ մինչև Սահմանադրության ընդունումը», ծավալվեց բուռն բանավեճ: Մի շարք պատգամավորներ առաջարկեցին կանոնակարգի այդ կետը փոխարինել այն բանաձևումով, որ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները ընտրվում են Ազգային-Եկեղեցական Ժողովի կողմից: Ի վերջո որոշվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նոր անդամների ընտրությունը կատարել Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունից հետո:

Ստուգիչ հանձնախմբի թվակազմին վերաբերող հոդվածի շուրջ ծավալված մտքերի փոխանակումից հետո առաջարկվեց նախապես 7 հոգուց բաղկացած հանձնախմբի կազմը համալրել ևս 4 անդամով: Ժողովը 242 ձայնով ընդունեց այդ առաջարկը: Ստուգիչ հանձնախմբի նորընտիր անդամներ դարձան Աբրահամ վարդապետ Մկրտչյանը, տիարք Վանուշ Կարապետյանը, Մարտին Թադևոսյանը և Սուրեն Սահակյանը:

Ապա, որոշ բարեփոխություններից հետո, ամբողջապես ընդունվեց Ազգային-Եկեղեցական Ժողովի կանոնակարգը: Պատգամավոր Խաչիկ Պապիկյանը առաջարկեց կատարել Դիվանի ընտրություն: Առաջարկը երկրորդվեց: Ձայների մեծամասնությամբ առաջարկն ընդունվեց: Ներկայացվեցին Գերագույն Հոգևոր Խորհրդի առաջարկած թեկնածուների անունները:

Ա ատենապետ՝ Տարիել Բարսեղյան, Ռաֆֆի Հովհաննիսյան:

Բ ատենապետ՝ Ներսես արք. Պոզապալյան, Վլադիմիր Հովհաննիսյան

Ա ատենադպիր՝ Հայկազուն ծ. վրդ. Նաջարյան, Սասուն վրդ. Զմրուխտյան

Բ ատենադպիր՝ Անանիա եպս. Արաբաջյան, Արծրուն Սահակյան:

Ապա տեղի ունեցավ քվեարկություն: Քվեարկությունից հետո ձայները բաշխվեցին հետևյալ կերպ՝

Տարիել Բարսեղյան՝ 237, Ռաֆֆի Հովհաննիսյան՝ 92 ձայն,

Ներսես արք. Պոզապալյան՝ 177, Վլադիմիր Հովհաննիսյան՝ 165 ձայն,

Հայկազուն ծ. վրդ. Նաջարյան՝ 229, Սասուն վրդ. Զմրուխտյան՝ 101 ձայն,

Անանիա եպս. Արաբաջյան՝ 220, Արծրուն Սահակյան՝ 115 ձայն:

Այսպիսով Ա ատենապետ ընտրվեց Տարիել Բարսեղյանը, Ա ատենադպիր՝ Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը, Բ ատենապետ՝ Ներսես արք. Պոզապալյանը, իսկ Բ ատենադպիր՝ Անանիա եպս. Արաբաջյանը:

Նորակազմ դիվանը փոխարինեց առժամյա դիվանին և անցավ իր պարտականությունների կատարմանը:

Նորակազմ դիվանը որոշեց Ազգային-Եկեղեցական Ժողովի Բ նիստը սկսել հաջորդ օրը, առավոտյան ժամը 9.30-ին:

Երեկոյան ժամը 18.30-ին Ազգային-Եկեղեցական Ժողովի Ա նիստը եզրափակիչ աղոթքով ավարտեց իր աշխատանքները:

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՌԺԱՄՅԱ ԴԻՎԱՆԻ

ՆԱԽԱԳԱՀ՝

ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Կաթողիկոսական Տեղապահ

ԱՏԵՆԱՊԵՏ՝

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԶԱՆՃՅԱՆ
Պատրիարք Հայոց Կ. Պոլսո

ԱՏԵՆԱԴՊԻՐ՝

ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

Բ ՆԻՍՏ
(Երեքշաբթի, 4 ապրիլի 1995 թ.)

Ազգային-Եկեղեցական Ժողովի Բ նիստը սկսվեց առավոտյան ժամը 9.00-ին: Նիստը բացվեց Ժողովի նախագահ Կաթողիկոսական Տեղապահ, Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի աղոթքով: Այնուհետև տեղի ունեցավ պատգամավորների հաշվառում: Ներկա էին 400 պատգամավորներ, որոնցով և հաստատվեց ժողովի քվորումը:

Ապա Ժողովի ատենապետը ընթերցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսական ընտրության թեկնածու ութ բարձրաստիճան հոգևորականների անունները (Նախորդ երեկոյան, երկու Ամենապատիվ Պատրիարքները՝ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը, Պատրիարք Հայոց Երուսաղեմի, և Տ. Կարեգին արքեպիսկոպոս Գազանճյանը, Պատրիարք Հայոց Կոստանդնու-

պոլսի, արդեն տեղեկացրել էին, որ դուրս են հանում իրենց անունները թեկնածուների ցանկից):

Այսպիսով՝ կաթողիկոսական թեկնածուներ դարձան.

ա) Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ, Կաթողիկոս Մեծի Տան Կիլիկիո
բ) Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչինյան
գ) Տ. Արիս եպիսկոպոս Ծիրվանյան
դ) Տ. Կյուրեղ եպիսկոպոս Գաբիկյան
ե) Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյան
զ) Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյան
է) Տ. Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյան
ը) Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյան:

Այնուհետև կազմվեցին մի շարք աշխատանքային հանձնախմբեր՝ հետևյալ աշխատակազմով.

ա) Օրինական Հարցերի Հանձնախումբ—Մեթր Խաչիկ Պապիկյան (Լիբանան), Տիարք Վոլոդյա Հովհաննիսյան (Հայաստան) և Վինսենթ Կյուրահյան (ԱՄՆ)

բ) Կարգապահության Հանձնախումբ—Տիարք Միշա Բադիրյան (Հայաստան), Գևորգ Գուլքանյան (Հայաստան), Գերաշնորհ Տ. Տարոն եպիսկոպոս Ճերեճյան (Ֆրանսիա) և Արժանապատիվ Տ. Սարգիս քհն. Սարգսյան (Իտալիա)

գ) Գնահատանքի Հանձնախումբ—Գերաշնորհ Տ. Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյան (Բաղդադ, Իրաք), Տիարք Արթուր Բասմաջյան (Կանադա) և Ռաֆայել Պապայան (Հայաստան)

դ) Բանաձևերի Հանձնախումբ—Տիարք Պիոն Հակոբյան, Հայկ Բարիկյան և Մերուժան Տեր-Գուլանյան (երեքն էլ Հայաստանից):

Հանձնախմբերի անդամների ընտրությունից հետո Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորները լսեցին Կաթողիկոսական Տեղապահ, Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի հաշվետու զեկուցումը՝ Կաթողիկոսական Տեղապահության իր վեցամսյա գործունեության վերաբերյալ, հավարտ որի գնահատանքի հետևյալ առաջարկը ներկայացրեց Գերաշնորհ Տ. Բաբկեն եպիսկոպոս Վարժապետյանը:

«Այս խղճամիտ, ճշգրիտ ու լրիվ տեղեկագրի համար խորին շնորհակալություն: Առաջարկում եմ, որ Ազգային-Եկեղեցական այս սրբագումար և պատկառելի Ժողովը երախտագիտական զգացումով և շնորհակալությամբ ընդունի սույն տեղեկագիրը»: Ժողովը միաձայնությամբ ընդունեց այս առաջարկը:

Տեղապահի զեկույցից հետո Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորները դիմեցին դեպի Մայր տաճար, ուր պետք է տեղի ունենային (գաղտնի քվեարկությամբ) կաթողիկոսական ընտրությունները:

Կեսօրվա ժամը 12-ին, պատգամավորների հաշվառումից հետո, տեղի ունեցավ առաջին քվեարկությունը:

Դեղի ընտրություն

ԱԵԺ-ի պատգամավորների երդման արարողություն

Առաջին քվեարկության արդյունքներն էին.
ա) Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ, Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո—111 ձայն
բ) Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչինյան—9 ձայն
գ) Տ. Արիս եպիսկոպոս Շիրվանյան—3 ձայն
դ) Տ. Կյուրեղ եպիսկոպոս Գաբիկյան—2 ձայն
ե) Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյան—37 ձայն
զ) Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյան—123 ձայն
է) Տ. Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյան—42 ձայն
ը) Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյան—61 ձայն:

Կաթողիկոսական ընտրության երկրորդ քվեարկության համար, համաձայն հաստատված կանոնի, երեք առավելագույն քվե ստացողներն էին հետևյալները.

ա) Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսը
բ) Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը
գ) Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյանը:

Գ ՆԻՍՏ

Ընդմիջումից հետո, կեսօրվա ժամը 15-ին, Ազգային-Եկեղեցական Ժողովի Գ նիստով սկսվեց ընտրության երկրորդ փուլը, հավարտ որի ընտրողների ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

ա) Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ—186 ձայն
բ) Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյան—145 ձայն
գ) Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյան—61 ձայն:

Երկրորդ ընտրության ժամանակ անվավեր համարվեցին 5 քվեներ: Ըստ ընտրական կանոնակարգի՝ հետագա ընտրությունը տեղի պիտի ունենար Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի և Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի միջև: Վերջինս, սակայն, ցուցաբերելով որդիական ակնածանք Տ. Տ. Գարեգին Կաթողիկոսի անձի նկատմամբ, ազնվորեն հրաժարվեց հետագա ընտրապայքարից՝ հայտարարելով ինքնաբացարկ:

Այսպիսով, առանց հետագա քվեարկության, ներկա պատգամավորների ցնծության և ծափահարությունների ներքո ազգիս 131-րդ Կաթողիկոս ընտրվեց Մեծի Տանն Կիլիկիո և այժմ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն (Հետայսու՝ Գարեգին Ա):

Ընդունելով Հայաստանյայց Եկեղեցու հոգևոր դասի և Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորների շնորհավորանքները, նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոսը տվեց նրանց իր առաջին օրհնությունը և հայրական պատգամները: Այսպիսով Գ նիստը իր ավարտը գտավ:

Այնուհետև, Մայր տաճարի զանգերի ղողանջի ներքո, եկեղեցական

Հոգեհանգիստ հանգուցյալ Հայրապետի շիրմին

ՍԵԴ-ի բացուկը ստորին

թափորը ուղղվեց դեպի Վեհարան, ուր և հոգևորական դասը աջահամբույրով ստացավ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Գարեգին Ա-ի շնորհաբեր օրհնությունը:

Ուշ երեկոյան, նորընտիր Հայրապետին շնորհավորելու համար, Ս. Էջմիածին ժամանեցին ՀՀ մեծարգո նախագահ Տիար Լևոն Տեր-Պետրոսյանը, ՀՀ Խորհրդարանի նախագահ Տիար Բաբկեն Արարքցյանը, ՀՀ Ներքին գործերի նախարար Վանո Սիրադեղյանը և պաշտոնական այլ անձինք: Վեհարանում կայացած ընդունելության ժամանակ Նորին Սուրբ Օծություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Հայաստանի Հանրապետության նախագահը փոխանակեցին ողջույնի խոսքեր:

ԱԶԳԱՅԻՆ- ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԴԻՎԱՆ

ՆԱԽԱԳԱՀ՝

ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Կաթողիկոսական Տեղապահ

Ա ԱՏԵՆԱՊԵՏ՝

ՏԱՐԻԵԼ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Ա ԱՏԵՆԱԴՊԻՐ՝

ՀԱՅԿԱԶՈՒՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱԶԱՐՅԱՆ

Դ ՆԻՍՏ
(Չորեքշաբթի, 5 ապրիլի 1995 թ.)

Այսօր, առավոտյան ժամը 10-ին, Ազգային-Եկեղեցական Ժողովը սկսեց իր չորրորդ և վերջին նիստը՝ նախագահությամբ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի: Ամենայն Հայոց Հայրապետը հաթյուն Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի: Ամենայն Հայոց Հայրապետը համգումարի բացման իր աղոթքից հետո ընթերցեց մի հատված Մատթեոսի Ավետարանից (Մատթ. ԻԵ 31—46) և, մեկնաբանելով Սուրբ Գրքի այդ հատվածը, ներկաներին տվեց իր հայրական հորդորները: Ապա Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանը կարդաց ապրիլի 4-ի նիստի արձանագրությունը, որը, բարեփոխության որոշ առաջարկություններից հետո, ընդունվեց միաձայն: Հավարտ ընթերցման Նորին Սուրբ Օծությունը արեց հավուր պատշաճի որոշ խորհրդածություններ:

Խոսելով Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների ընտրության մասին, Տ. Տ. Գարեգին Ա-ն ասաց, որ տարիների ընթացքում Մեծի Տանն Կիլիկիո

Աթոռը ղեկավարելու իր փորձը ցույց է տվել, որ որևէ հանձնախմբի կամ խորհրդի ընտրություն կատարելուց առաջ հարկ է նշանակել նախ նշանակման կոմիտե (nomination committee), այն պատճառով, որ մենք դեռևս չենք ճանաչում այն անձանց, որոնք ընտրվելու են որպես Գերագույն Հոգևոր Խորհրդի նոր անդամներ: Նրանց արժանիքները, ընդունակությունները իմանալու համար է անհրաժեշտ ժամանակ: Ուստի, ինչպես Վեհափառ Հայրապետը հայտնեց, խորհրդակցելու է Ամենապատիվ Պատրիարք Հայրերի հետ, նշանակելու համար Գերագույն Հոգևոր Խորհրդի նոր կազմը մինչև նոր Ազգային-Եկեղեցական Ժողովի գումարումը, որ տեղի է ունենալու երկու տարի հետո:

Տ. Տ. Գարեգին Ա-ի սույն մտածումը առաջարկի ձևով Ժողովին ներկայացրեց Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը: Այն երկրորդվեց Տ. Ոսկան եպիսկոպոս Գալփաքյանի կողմից: Առաջարկն անցավ միաձայն:

Խոսելով Հայ Եկեղեցու ապագա գործունեության մասին, Նորին Սուրբ Օծությունն ասաց, որ մեր առաջին նպատակը պիտի լինի Հայաստանում որպես պետական կրոն Քրիստոնեության հաստատման 1700-ամյակին նախապատրաստվելը: Աշխարհում ոչ մի պետություն, ոչ մի Եկեղեցի դեռևս այսպիսի մարտահրավեր չի ուղղել: Դա մեծ պատիվ և պատասխանատվություն է մեր Եկեղեցու համար: Շատ Եկեղեցիներ ու կազմակերպություններ այսօր՝ 2000-ամյակի ավարտին և 3000-ամյակի շեմին, տևապես մտածում են, թե ինչպես թարմացնեն, բարոյապես առողջացնեն իրենց ներքին կյանքը: Մենք նույնպես պարտավորություն ունենք ամենայն լրջությամբ զբաղվելու այդ աշխատանքներով:

Տ. Տ. Գարեգին Ա-ն հայտնեց, որ անցած տարի, 1994-ին, ինքը, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Ամենապատիվ Պատրիարքները, հանգուցյալ Հայրապետի հետ, ծրագրել էին կազմել մի հանձնախումբ, որը պիտի զբաղվեր 1700-ամյակին նվիրված աշխատանքներով: Այս առթիվ կառավարության կողմից նույնպես նշանակվել է 24 հոգուց բաղկացած մի հանձնախումբ:

Փոքր Ասիայի այս տարածքում հայ ժողովրդի կողմից քրիստոնեական իր հավատքի և մշակույթի պահպանումը համազոր է մի հրաշքի, ասաց Նորին Սուրբ Օծությունը: Տ. Տ. Գարեգին Ա-ն, միաժամանակ չափազանց կարևոր համարեց Հայ Եկեղեցին ուժեղացնել ներքնապես հայ հավատացյալներին հաղորդ դարձնելու համար քրիստոնեական ճշմարտությանը, Ավետարանի պատգամներին, բավարարելու նրանց հոգևոր պահանջները:

Մեր Եկեղեցին, ըստ Հայոց Հայրապետի, պիտի վերստին այնքան կենսունակություն ստանա, որ չթույլատրի օտար քարոզիչներին գալ այստեղ ու լցնել մեր հոգևոր դատարկությունը: Պետք չէ այս առթիվ մեղադրել որևէ մեկին, այլ՝ լծվել աշխատանքի: Եվ այս գործում շատ անելիքներ ունի Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը: Նոր սերնդի պատրաստության հարցը, ըստ Նորին Սուրբ Օծության, ամենակարևոր հարցերից մեկն է: Հոգևոր ճեմարանը սիրտն է Հայ Եկեղեցու հոգևոր հաստատությունների: Նախկինում Գևորգյան ճեմարանը հիացմունքի առարկա էր մեզ համար: Այսօր, հարց է տալիս Վեհափառ Հայրապետը, ինչպե՞ս պիտի ճանաչենք հոգևոր ճեմարանը, եթե ոչ այն մարդկանցով, ովքեր իրենց կրթությամբ, պատրաստակամությամբ և հոգևոր զորությամբ պիտի ծառայեն այնտեղ:

Նորին Սուրբ Օծությունը ոչ պակաս կարևոր է համարում նաև հայրենիքի զորացման համար ծառայելու մեր պատրաստակամության հար-

ցը: Մինչ օտար Եկեղեցիները քարոզում են, որ Եկեղեցին և ազգը տարբեր բաներ են, Հայ Եկեղեցու պարագային Եկեղեցին և ազգը անբաժան են: «Ես չեմ մոռանա,—ասում է Վեհափառը,—երբ փոքր ժամանակ մեր հայրենի գյուղի դաշտերի մեջ պարզում էի իմ փոքրիկ ափերը և արտասանում. «Ազատն Աստված այն օրից...»: Այժմ եկել է այդ ազատությունը: Այսօր ունենք մեր անկախ ու ազատ պետությունը: Ունենք մեր Եկեղեցին: Ամուր պահենք այն: Դրա լավագույն առհավատչյան այսօր Համահայկական Հիմնադրամի առկայությունն է, և մեր պարտականությունը պետք է լինի զորավիգ կանգնել դրան, այն արժեվորել հայրենաշինությամբ»:

Վերջին հարցը, որին անդրադարձավ Վեհափառ Հայրապետը, տընտեսական հարցն էր: Նախկին Ազգային-Եկեղեցական Ժողովները միշտ էլ մտահոգ են եղել Եկեղեցու տնտեսական կացությամբ: Տ. Տ. Գարեգին Ա-ն նախ իր շնորհակալություններն է հայտնում Ամենապատիվ Տ. Թորգոմ Պատրիարքին իր հաշվետու զեկույցի համար և ասում, որ Եկեղեցին այժմ պարտավոր է անցնել տնտեսական նոր քաղաքականության: Կամավոր նվիրատվությունները Նորին Սրբությունը համարում է գեղեցիկ մի երևույթ, որը սակայն չի կարող տնտեսական քաղաքականության հիմք դառնալ: Եկեղեցին պիտի հիմնվի մնայուն ֆոնդերի հաստատման վրա, ֆոնդեր, որոնք հնարավորություն կտան տոկուն կովաններ ունենալու: Եկեղեցուն այլևս բավարար չեն լումաները, ինչպես «Լուսավորչի լուման» և այլ նվիրատվություններ: Դրանք շատ օգտակար են, սակայն Եկեղեցին, թեմերը պետք է գտնեն այնպիսի հավելյալ միջոցներ, որոնք հպարտության զգացում կտան մեզ՝ մեր կատարած աշխատանքների դիմաց:

Հայաստանյայց Եկեղեցու բարեկարգությունը, ըստ Վեհափառի, պետք է լինի մեր մտածողության սևեռակետը: Պետք է այնպես բարեկարգել Եկեղեցին, որ այն դառնա մի ուժ, հայ ազգի շենության և բարեկարգության ճանապարհին:

Հավարտ Հայ Եկեղեցու այսօրվա վիճակին վերաբերող իր մտածումների, Վեհափառ Հայրապետը ներկա պատգամավորներին հրավիրեց հանդես գալ իրենց առաջարկներով և դիտողություններով՝ իր հերթին խոստանալով ժամանակի ընթացքում հնարավորին չափով լուծելու դրանք:

Եղան բազմաթիվ թելադրանքներ, որոնցից ամենակարևորները ներկայացնում ենք ստորև.

ա) Ծիրակի թեմ—Թելադրում ենք, որ այս Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորները մինչև Եկեղեցական նոր Սահմանադրության ընդունումը (երկու տարի հետո) պահեն իրենց պատգամավորների հանգամանքը:

բ) Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյան—Հայ Եկեղեցուց ներս կատարել ծեսի բարեկարգություն և այժմեականացնել այն:

գ) Տ. Արիս եպիսկոպոս Ծիրվանյանի թելադրությունները.

1) Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորները այցելեն Ծիծեռնակաբերդ՝ Մեծ եղեռնի 80-րդ տարեդարձի առթիվ զոհվածներին հարգանքի տուրք մատուցելու.

2) Դրականորեն լուծել Հայ Եկեղեցու միության հարցը.

3) Հաստատել Սահմանադրություն և մոտ ժամանակներս հրավիրել Եպիսկոպոսաց Ժողով:

դ) Գուգարաց թեմի պատգամավորները թելադրեցին.

1) Կաթողիկոսական ընտրությունների ժամանակ պատգամավորների միջև ստեղծել հավասարազորություն՝ անկախ թեմի մեծ կամ փոքր լինելուց:

2) Յուրաքանչյուր երկու-երեք տարին մեկ հրավիրել Ազգային-Եկեղեցական Ժողով:

3) Կաթողիկոսության կառավարման տարիք համարել 75-ը.

4) Ժողովրդի աչքին հոգևորականի վարկը բարձրացնելու նպատակով Մայր Աթոռի տարածքում մի հուշակոթող կանգնեցնել բռնատիրության տարիներին զոհված հայ հոգևորականների հիշատակին:

ե) Գերաշնորհ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյան—

1) Ստեղծել առաջարկներ բերող հանձնախումբ.

2) Դադարեցնել Ազգային-Եկեղեցական Ժողով հրավիրելու նախկին կանոնակարգը և Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հաստատել նոր կանոնակարգ.

3) Ինքնաբուխ նվիրատվության կոչ հղել աշխարհի հայությանը և Ազգային-Եկեղեցական Ժողովին.

4) Վերանայել, անհրաժեշտության դեպքում, բոլոր ուղերձները և արձանագրությունները, որոնք տարբեր առիթներով ուղղվել են տարբեր մարդկանց:

զ) Գերաշնորհ Տ. Աղան արքեպիսկոպոս Պալեոզյան—Սրբացնել 1915 թվականի Եղեռնի բոլոր զոհերին:

է) Ռուսաստանի թեմ—Քրիստոնեության հաստատման 1700-ամյակի առթիվ ստեղծել դրամական ֆոնդ:

ը) Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյան—Կազմակերպել հավաքական և առանձին հանդիպումներ Վեհափառ Հայրապետի և թեմական առաջնորդների միջև:

թ) Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյան—

1) Կատարել որոշ բարեփոխություններ կուսակրոնության ասպարեզում.

2) Հանգիստ թողնել 1915 թ. հայ նահատակների հիշատակը և չսրբացնել նրանց: Եվ, ընդհակառակը, քաղաքական նպատակներից ելնելով, հեռագրեր ուղարկել աշխարհի շատ երկրներ՝ ճանաչել տալու համար ցեղասպանությունը:

ժ) Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Տիար Հակոբ Փափազյան—Բարձրացնել հոգևոր ճեմարանի ուսման մակարդակը՝ հասցնելով այն գիտական աստիճանի:

ժա) Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը թելադրեց—

1) Մայր Աթոռին վերադարձնել վանքապատկան և բռնագրավված բոլոր հողերը.

2) Բարելավել Մայր Աթոռի միաբանների տնտեսական վիճակը:

ժբ) Արթո Պասմաճյան (Կանադա)—Սրբացնել Տ. Կոմիտաս վարդապետին:

ժգ) Տիար Սարգիս Պետոյան (Ֆրանսիա)—Ստեղծել Ս. Էջմիածնի ֆոնդ:

ժդ) Տ. Մամբրե ավագ քհն. Կուզոյանը խնդրանքով դիմեց նորընտիր Վեհափառ Հայրապետին՝ կիսելու իր մտածումները Եկեղեցու միասնության վերաբերյալ:

ժե) ԱՄՆ-ի Արևելյան թեմից Դին Շահինյանը արեց հետևյալ թելադրությունները.

1) Ամուսնացյալ քահանաները կարողանան դառնալ կամ ընտրվել թեմական առաջնորդներ.

2) Ամուսնացյալ քահանաները կարողանան դառնալ եպիսկոպոս.

3) Արժանավոր ամուրի անձերը առանց կուսակրոնության ուխտ կատարելու դառնան քահանա՝ հետագայում ամուսնանալու թույլտվությամբ.

4) Կանանց սարկավագ լինելու թույլտվության ստացում:

ժզ) Գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյան—Հանդիսավորապես նշել հոգևոր ճեմարանի վերաբացման 50-ամյակը:

ժէ) Գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյան—Տ. Խորեն Ա Մուրադբեկյան երջանկահիշատակ Կաթողիկոսի աճյունը Ս. Գայանե վանքից տեղափոխել Մայրավանք:

ժը) Տիար Ժոզեֆ Ավետիսյան (Արարատյան թեմ)—Ստեղծել Հայ եկեղեցիների կառուցման և վերանորոգման ֆոնդ՝ արդեն այդ առիթով գոյություն ունեցող հիմնադրամի վրա:

ժթ) Տիկին Ավետլանա Պետրոսյան (Արարատյան թեմ)—

1) Լուսավորության նախարարության հետ համաձայնեցնելով՝ հանրակրթական դպրոցներում պարտադիր դարձնել կրոնական առարկաների դասավանդումը:

2) Ամուսնական ակտեր կատարել միայն Եկեղեցու միջոցով:

Այս և ուրիշ առաջարկներից հետո զեկուցումով հանդես եկավ Գնահատանքի Հանձնախմբի անդամ Տիար Ռաֆայել Պապայանը: Հավարտ նրա զեկուցման Ս. Պետերբուրգի հայ համայնքի պատգամավորները 131-րդ Կաթողիկոսի ընտրության առիթով Նորին Սուրբ Օծությանը նվիրեցին իրենց պատվերով պատրաստված 131 արծաթե հուշամեդալներ: Նրանք հրավիրեցին Նորին Սուրբ Օծությանը այցելել Ս. Պետերբուրգ:

Իր պատասխան խոսքում Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսը խոստացավ գրավոր կերպով պատասխանել բոլոր այն հարցերին և թելադրություններին, որ արվել էին պատգամավորների կողմից:

Ապա Վեհափառ Հայրապետը շեշտեց Հայ Եկեղեցու կողմից Համաշխարհային Էկումենիկ շարժմանը ակտիվորեն մասնակցելու կարևորությունը և անցավ իր շնորհակալական խոսքին:

Նորին Սուրբ Օծությունը շնորհակալություն հայտնեց նախ՝ Ամենապատիվ երկու Պատրիարք Հայրերին, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին, Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանին և Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանին՝ Ազգային-Եկեղեցական Ժողովը բարձր մակարդակով կազմակերպելու և անցկացնելու համար, հայրենի պետության ներկայացուցիչներին, Էջմիածնի քաղաքապետարանին, հանրության ներկայացուցիչներին, մամուլին, Մայր Աթոռի մատակարարման բաժնին, Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորներին և Ժողովի Դիվանին:

Ազգային-Եկեղեցական Ժողովը փակվեց Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի օրհնությամբ և աղոթքով:

Ազգային-Եկեղեցական Ժողովի Դիվանը ևս շնորհավորեց Ամենայն Հայոց նորընտիր Կաթողիկոս Գարեգին Ա-ին և ցանկացավ հաջողություններ իր սուրբ առաքելության ճանապարհին:

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԴԻՎԱՆ

ՆԱԽԱԳԱՀ՝

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա
Նորընտիր Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ա. ԱՏԵՆԱՊԵՏ՝

ՏԱՐԻԵԼ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Բ ԱՏԵՆԱՊԵՏ՝

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆ

Ա ԱՏԵՆԱԴՊԻՐ՝

ՀԱՅԿԱԶՈՒՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱԶԱՐՅԱՆ

Բ ԱՏԵՆԱԴՊԻՐ՝

ԱՆԱՆԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԱԲԱՋՅԱՆ